ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

20 դեկտեմբերի 2024 թվական թիվ 312-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-052-0104-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՍԵԴՐԱԿԻ ՄԻՔԱԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԱՍՆԱՇԵՆՔՆ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետի գ) ենթակետի, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 և 39-րդ կետերի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կապս գյուղի բնակիչ Աշոտ Սեդրակի Միքաելյանը 2024 թվականի հոկտեմբերի 29-ի իր դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Ախուրյան համայնքի սեփականությունը համարված 380,4 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով արտադրական նշանակության անասնաշենքը, ինչպես նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականությունը հանդիսացող 08-052-0104-0007 կադաստրային ծածկագրով 0,2 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության, Շիրակի մարզի, Ախուրյան համայնքի սեփականությունը համարված 380,4 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով արտադրական նշանակության անասնաշենքը, ինչպես նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված, 08-052-0104-0007 կադաստրային ծածկագրով, 0,2 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը (անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ,

Ախուրյան համայնք, գյուղ Կապս, 31-րդ փողոց, 8 անասնաշենք, իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 11122024-08-0003) ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով, 1316974 (մեկ միլիոն երեք հարյուր տասնվեց հազար, ինը հարյուր յոթանասունչորս) դրամ արժեքով, որից՝ 565275 (հինգ հարյուր վաթսունհինգ հազար, երկու հարյուր յոթանասունհինգ) դրամը շինության արժեքն է, իսկ 751699 (յոթ հարյուր հիսունմեկ հազար, վեց հարյուր իննսունինը) դրամը՝ հողամասի, օտարել կառուցապատողին՝ քաղաքացի Աշոտ Սեդրակի Միքաելյանին (ծնված 25/02/1955 թվական):

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝

1) Սույն որոշման 1-ին կետում նշված վաճառքի ընդհանուր գնին հավելել տվյալ գույքային միավորի նկատմամբ, մինչև օտարումը համայնքի անվամբ իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աշոտ Սեդրակի Միքաելյանին պատշաճ ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -22 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ս. ՍԻՄՈՆՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Մ. ՄԱԹՈՍՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՉԱԼՈՅԱՆ
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Վ. ԹՈՐՈՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Թ. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

20 դեկտեմբերի 2024 թվական
գյուղ Ախուրյան